ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

(իրավաբանական անձանց համար)

Սույնով տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունը՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ «Հաճախորդի իրավունքներ» բաժնում հրապարակված «Անձնական և այլ տվյալների մշակման, տեղեկատվության հավաքագրման, օգտագործման և փոխանցման, ինչպես նաև «ԱՔՌԱ ՔՐԵԴԻԹ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ից և իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններից, կազմակերպություններից հարցումներ կատարելու վերաբերյալ» հրապարակային համաձայնության տեքստին:

Սույնով հաստատում եմ իմ կողմից տրված տեղեկությունների արժանահավատությունը և պարտավորվում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին տրամադրված տվյալների ցանկացած փոփոխության մասին: Ընդ որում՝ հայտարարում և հավաստում եմ, որ Բանկի կողմից այն տվյալների թարմացման վերաբերյալ գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով) պահանջ ներկայացվելու դեպքում, որոնք Բանկին հասանելի կարող են դառնալ բացառապես Ընկերության կողմից տրամադրելու դեպքում, պահանջում նշված ժամկետում համապատասխան տեղեկատվություն չտրամադրելու դեպքում, Ընկերության վերաբերյալ Բանկում առկա տվյալները պետք է համարվեն չփոփոխված:

Սույնով հայտնում եմ, որ Ընկերությունը մտադիր է իր կողմից Բանկին հայտնվող, բացահայտվող, տրամադրվող, ինչպես նաև իր և Բանկի միջև ծագող իրավահարաբերությունների ընթացքում Բանկի կողմից Ընկերության վերաբերյալ որևէ անձից ստացված կամ որևէ տարբերակով հավաքագրված, մշակված ցանկացած տեղեկատվություն գաղտնի պահել երրորդ անձանցից, ուստի խնդրում եմ վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել որպես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն:

Սույնով հավաստում եմ նաև, որ Ընկերության, որի անունից հանդես եմ գալիս սույն համաձայնությունը ներկայացնելիս, մասնակից(ներ)ը/բաժնետեր(եր)ը, օրինական ներկայացուցիչը տեղեկացված է(են) սույն համաձայնության ներկայացման հետևանքով Բանկի կողմից իրենց անձնական տվյալների մշակման անհրաժեշտության մասին, դրա վերաբերյալ առկա է նրա(նց) համաձայնությունը: Գիտակցում եմ, որ սույն պարբերությամբ տրված հավաստիացման՝ իրականությանը չհամապատասխանելու դեպքում առաջացած բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ընկերությունը՝ ի դեմս գործադիր մարմնի ղեկավարի:

Ընդ որում, ստորագրելով սույն համաձայնությունը, Ընկերությունը՝ ի դեմս գործադիր մարմնի ղեկավարի, ստանձնում է պարտավորություն՝ Ընկերության մասնակից(ներ)ի/ բաժնետեր(եր)ի փոփոխության դեպքում ստանալ նոր մասնակից(ներ)ի/բաժնետեր(եր)ի համաձայնությունը վերոնշյալ պարբերությամբ տրված համաձայնության վերաբերյալ, իսկ հակառակ դեպքում՝ Բանկին տեղեկացնել այդ մասին ոչ ուշ, քան փոփոխությանը հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Սույնով Ընկերությունը՝ ի դեմս գործադիր մարմնի ղեկավարի, պարտավորվում է նաև Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության դեպքում վերջինիս տեղեկացնել սույն համաձայնությամբ ստանձնված պարտավորությունների մասին: Չտեղեկացման բացասական հետևանքների ռիսկը կրում է Ընկերությունը:

Հավաստում եմ, որ կարդացել եմ համաձայնության տեքստը և այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի, ընկալելի և ընդունելի է:

Ընկերության անվանումը	ՀՎՀՀ
Տնօրենի ԱԱՀ	(ստորագրություն)